չև որ այդ աստիճան փչացած, կեանքի մէջ ոչինչ բարոյական հաստատ սկզբունք, բարոյական կրթութիւն չունեցող հասարակութիւն ընդունակ կը դառնայ առաջադիմական որ և է կանոնաւոր շարժման։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

—

Հինգշաբթի, յունվարի 8-ին հայ դերասանական խումբը ներկայացրեց „Խելքից պատուհաս“ (Горе отъ ума) կոմ. 4 արարուածով Գրիբոյեդովի, թարգ. ոտանաւորով պ. Տէր-Աստուածատուրեանի։

Գրիբոյեդովի այդ գրուածքը, թէ իր բովանդակութեամբ և թէ լեզուի կողմից ռուսաց գրականութեան մէջ առաջնակարգ տեղ է բռնում։

Զը կամենալով պատմել Գրիբոյեդովի պատուհասի բովանդակութիւնը, հարկաւոր ենք համարում նկատել, որ այդ գրուածքը մի կռիւ, մի անհաշտ պատերազմ է ներկայացնում հին սերունդի, որի ներկայացուցիչը Ֆամուսովն է, և նոր սերունդի մէջ, որի ներկայացուցիչը Չացկին է հանդիսանում։

Կոմեդիան նկարագրում է իրան ժամանակակից Մոսկվայի հասարակութեան կեանքը, նա, ռուս քննիչների վկայութեան համեմատ, բաւական պակասութիւններ ունի, Չացկու անձնաւորութիւնը անաջող է, իսկ ճնացած գործող անձինք շատ գեղեցիկ են նկարագրված։

Հին սերունդի ներկայացուցիչը, Ֆամուսով շատ գեղեցիկ նկարագրված է իբրև հասարակութեան անդամ և իբրև ռուս աստիճանաւոր, իսկ Չացկին, նոր սերունդի ներկայացուցիչը, իր հակառակորդների պակասութիւնները կրիտիկային ենթարկել համարձակվող այդ ազատախօսը բաւական անգոյն, թոյլ և ինքն իրան հակասող մի բնաւորութիւն է։

Կուսակցութիւններից մէկի ներկայացուցիչները ամբողջապէս դուրս են բերված պիեսայի մէջ, սկսելով Մոլչալինից մինչև Ֆամուսով, միւս կուսակցութեան ներկայացուցիչը, Չացկին, միայնակ է և նրա ասածներին ոչ ոք արձագանք չէ տալիս։

Գրիբոյեդովի լեզուն աղատ, կենդանի և խօսակցական լեզու է այնպիսի ոտանաւորներով գրած, որոնցից գրեթէ իւրաքանչիւրը դարձել է առած և անդադար գործ է ածվում խօսակցութեան ժամանակ։

Հայոց բեմի վրա պիեսան համեմատաբար շատ լաւ անցաւ։ Երևում էր, որ դերձին մասնակցողներից իւրաքանչիւրը բարեխղճաբար էր վերաբերվել իր պարտականութեանը և աշխատել էր կարելուութեան չափ աջակցել պիեսայի ամբողջութեանը, որ բաւական լաւ էր։

Երևում էր, որ բէժիսեորը, կամ նրա գործը կատարող անձինք, լաւ ուսումնասիրած էին պիեսան և խաղացողներին մեկնել էին պիեսայի բոլոր կէտերի նշանակութիւնը, գործողութեան ժամանակ դերասանների բռնելի դիրքը, նրանց շարժուածքները և այլն։

Այն բանը մեզ այնքան նկատելի էր, որ կարծես մեր դերասանները և դերասանուհիք բացառութեամբ ա. և պ. Զմշկեանի և պ.պ. Ադամեանի և Մանդինեանի մի սերտած դաս էին ասում, բայց պէտք է խոստովանել, որ այդ հանգամանքը հասարակութեան աչքը չէր ընկնում, որովհետև այս դէպքում պէտք է հասարակութիւնը վատ տպաւորութիւն ստանար, իսկ դրա հակառակը եղաւ։

Առանձին ուշադրութեան արժանի են պ. Զմշկեանի գրիմը, հագուստը, նրա շարժուածները և այլն, որի պատճառով պ. Զմշկեանին հասարակութիւնը անընդհատ ծափահարութիւններով և ընծաներով ընդունեց։

Պ. Տէր-Դաւթեանը Մոլչալինին դարձրեց մի ծառայ, մի բթամիտ ծառայ, որ զուրկ է մինչև անգամ այդ դասակարգին պատկանողների յանդգնութենից և իրանց պարոններին նմանվելու անձնանի ձևերից։ Վատ չէր լինի, եթէ պարոնը շատ չերևակայէր իր տաղանդի մասին և ի նկատի ունենար, որ անմշակ իւրաքանչիւր գանձը ոչոքի համար պիտանի չէ։ Իլ չենք խօսում նրա մասին, որ պ. Տէր-Դաւթեանը պէտք է ամաչի, տեսնելով պօլսեցիների իրանից անհամեմատ գերազանց խաղը, որ նա պէտք է ուսումնասիրէր իր դերը, բաւական էր մտածել, որ Մոլչալինը ապրում է արիստոկրատ ատիճանաւորի տանը, պրտրտում է արիստոկրատ կանանց շրջանի մէջ, ուրեմն նրա ձևերն էլ պէտք է այդ շրջանին փոքր ի շատէ համեմատ լինէին։

Թարգմանութեան մասին մենք ոչինչ չենք կարող ասել, քանի որ նա տպված չէ և ձեռագրին էլ մենք չենք նայել։ Գրիբոյեդովի պատուհասի թարգմանութիւնը, մի և նոյն ժամանակ ոտանաւորով, շատ դժուար գործ է և դատել նրա մասին դերասանների արտասանութեան և մի անգամ թատրոնի մէջ լսածի համեմատ, մենք անկարելի ենք համարում։ Մենք միայն նշանակեցինք, որ դերասանները մեծ մասամբ ոտանաւորները արտասանելու ժամանակ երգում էին, փոխանակ ձայնի խօսակցական ել և էջն անելու։ Զը գիտենք այդ հանգամանքը դերասանների ոտանաւոր արտասանելու անկարողութեանը վերաբերենք, թէ թարգմանութեանը։ Պիեսայի թարգմանիչ, պ. Տէր-Աստուածատուրեանը, մի քանի անգամ բեմ կանչվեցաւ։ Որքան մենք մտաբերում ենք, այդ առաջին անգամն է, որ թարգմանողը բեմ է կանչվում։

Մի քանի խօսք էլ կոմիտետին, որ հասարակութեան շնորհակալութեան արժանի է Օստրովսկու „Արդիւնաւոր պաշտօնը“ և Գրիբոյեդովի պատուհասը հայոց բեմի վրա ներկայացնելու համար, որը, թէպէտ հին, պատմական և հեռաւոր քաղաքի կեանք է նկարագրում, այնու ամենայնիւ հասարակութեանը օգուտ տուեց։

Թող մասնաժողովը շարունակէ իր բռնած նոր ընթացքը։ Թող առօրեայ կեանքից վերցրած պիեսաներ ներկայացնէ, չը բաւականանայ թարգմանութիւններով, այլ փոխադրել տայ, չը բաւականանայ թարգմանութիւնները և փոխադրութիւնները վարձատրելով, այլ պրեմիաներ նշանակէ լաւերի համար, ինչպէս մենք վաղուց խորհուրդ ենք տուել և այն ժամանակ հայոց թատրոնը շքեղութեան առարկայ, աւելորդ գարդ չի լինի, այլ օգտաւէտ մի հիմնարկութիւն, մի ուսումնարան։

Երբ մասնաժողովը հայ թատրոնը այն դրութեան կը հասցնէ, որ ժողովուրդը առօրեայ պիեսաները տեսնելու համար նոյնպէս կը լցնէ թատրոնը, ինչպէս և բոմանտիական անբնական պիեսաները տեսնելու, այն ժամանակ նա ուղղած կը լինի իր սկզբնական սխալը։

* * *

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կրկնում ենք դարձեալ որ բացի «Մշակի» խմբագրատունից Թիֆլիսցիները կարող են գրվել «Մշակին» պ. Շավերդովի պավիլիոնում, որ գտնվում է Ալէքսանդրեան այգու անկիւնում, Գոլովինսկի պրոսպեկտի վրա։ Իսկ օտարաքաղաքացիք պէտք է դիմեն ուղղակի մեր խմբագրութեանը։

—

Լոնդ. Հայ-Գեարգեար գիւղից մեզ հաղորդում են, որ յունվարի 9-ին գիշերը 3-4-ենացի ամբողջ ընտանիքը՝ որ հինգ հոգուց է բաղկացած, անյայտ չարագործները սրի են անցրել։ Նոյն երեկոյ Բ. Մ-ենացի խոտի դէզեր դարձեալ անյայտ չարագործները այրել են։ Այդ անցքերի մասին մեր թղթակիցը խոստանում է մեզ մի այլ անգամ մանրամասնութիւններ հաղորդել։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ մեզ գրում են։ «Այս ձմեռը անցեալ ձմեռվայ կատարեալ հակապատկերն է։ Որքան դաժան և ցուրտ էր անցեալ ձմեռը, այնքան մեղմ և տաք է այս տարվանը։ Յունվարի երեքին, չորսին և հինգին այն ատիճան տաք էր եղանակը, որ ձիւնի փոխանակ գալիս էր յորդառատ անձրև, ինչպէս մայիս ամսին։ Այս տարի թէ քաղաքում և թէ շրջականերում սաստիկ տարածված են տիֆը և բուկուռուցք կոչված ցաւը։ Վերջինը շատ զոհեր է տանում մանուկներից։»

—

դրդի նա, երբ կիմանար, թէ իր կինը լրտեսում է նրա խօսակցութիւնները, թէ Ահմէդի ձեռքով կաշառում է սպասաւորներին, թէ.... վերջապէս շատ բաներ կարող էր գիտենալ նա, այնուհետև ինքը կորած էր։

Ահա այդ մտատանջութիւնների մէջ գտաւ նրան խանը, որ աւելի բարկացած, քան թէ զարմացած իր ամուսնի անակնկալ այցելութեան վրա, ներս մտաւ գաղտնարանը։ Հարեմի մէջ փակված կնոջ իր արդելարանից դուրս գալը, և ահագին բազմութեան միջից անցնելով, այդ վրանը մտնելը ոչ միայն անվայել, այլ բոլորովին հակառակ էր կանանոցի կանոններին։ Եւ դրանով պէտք է բացատրել այն սպառնական հայեացքը, որով դարձաւ խանը դէպի իր կինը հարցնելով.

—Դու ինչ գործ ունես այստեղ։

Սիւրին մնաց չփոթված. կարծես, նրա լեզուն կապեցին, և մի խօսք անգամ չը գտաւ պատասխանելու։ Նրան տիրեց մի տեսակ երկիւղ,—ստրուկի երկիւղը իր սարսափելի տիրոջ առջև։ Այդ առաջին անգամն էր, որ նա զգում էր իր ոչնչութիւնը, թէ ինքը մահմետական ընտանիքի մէջ մի կրաւորական առարկայ էր, մի փայլուն և խայտաճամուկ զարդ էր, և ոչ կամքի ու խօսքի տէր արարած, և ոչ ամուսնի ընկեր ու նրա խորհրդակից։ Խանը նայելով այդ գեղեցիկ, չփոթված առարկայի վրա, որը, որպէս մի ամօթխած հրեշտակ, ներկայանում էր նրա աչքում իր բոլոր սքանչելի հրապուրանքով, մեղմեց իր բարկութիւնը, և մօտենալով, բռնեց նրա ձեռքից, նստեցրեց իր մօտ մախմուռի օթոցի վրա, հարցրեց.

—Գիտեմ, մի խնդիրքով եկած կը լինես ինձ մօտ, խօսիր, նազելիս, ինչ ունիս ասելու։

Նեղ դրութիւնը մարդուն սրամիտ է շինում։ Սիւրին յանկարծ յիշեց այն նշանաւոր բոպէն իր ամուսնական կեանքում, որ սկիզբը դրեց նրա ամբախտութեանը։ Նա յիշեց այն տագնապալից գիշերը, երբ ինքը տասն և չորս տարեկան մի անմեղ աղջիկ, փառասէր հօր ձեռքով ձգվեցաւ խանի գիրկը։ Նա յիշեց այն բոլոր հոգեկան տանջանքը, այն բոլոր գարշելի զգուանքը, որով ինքը, որպէս մի նոր Հոֆիսմէ, պատերազմում էր խանի գազանային կրքերի դէմ և չէր կամենում անձնատուր լինել։ Նա յիշեց այն խօսքը, որ ախտաբորբոք խանը երդվելով ասաց նրան. «Ինդրիր ինձանից ամէն բան և ես կը տամ քեզ, միայն թէ դու իմ լինես»։ Սիւրին ոչինչ չը խնդրեց և անձնատուր եղաւ... Այնուհետև խանը մի քանի անգամ կրկնեց նրան մի և նոյն խոստմունքը, բայց Սիւրին միշտ սպասում էր մի կարևոր դէպքի, որ իր խնդրածը մի նպատակայարմար և նշանաւոր բան լինէր։ Այժմ դէպքը ինքն ըստ ինքեան առաջ եկաւ։

Նա չոքեց խանի առջև, որպէս մի խոնարհ աղերսարկու աստուածներից ամենասարսափելի արձանի առջև, և իր գեղեցիկ, արտասուքով լի աչքերը դէպի վեր բարձրացնելով, ասաց.

—Իմ իշխանը յիշում է, որ մի պարտք ունի ինձ վճարելու։

—Ի՞նչ պարտք, հարցրեց նա զարմանալով։

Սիւրին յիշեցրեց նրան հին խոստմունքը։

—Այդ ես չեմ մոռացել, ասաց խանը ժպտելով,—ես մեղաւոր չեմ, որ քո առջև վատ պարտական գտնվեցայ, դու առհասարակ անհոգ ես քո ապառիկների վերաբերութեամբ։—Հիմայ խնդրիր, ինչ որ կամենում ես, ես իմ խոստմունքը պատրաստ եմ կատարելու։

—Ես քեզանից մեծ բան չեմ խնդրելու, պատասխանեց Սիւրին, տակաւին անշարժ մնալով իր չոքած դրութեան մէջ,—ես եկայ խնդրելու, որ ազատես հայ գերիներին և Թորոս իշխանին ձեռնունայն յետ չը դարձնես։

—Ա՛... այդ շատ մեծ բան է քո խնդրածը... պատասխանեց խանը զարմայական բացականչութեամբ, և նրա փոքր ինչ մեղմացած դէմքը կրկին մռայլվեցաւ սովորական խստութեամբ։—Դու կամենում ես ինձ կորցնել տալ մէկիք Վերթանէսի ամբողջ գանձը։

—Ի՞նչ գանձ։

Խանը սկսեց պատմել նրան բոլորը, ինչ որ լսել էր նրա հօրից և մէկիք Ֆրանգիւլից առասպելական գանձի մասին, աւելացնելով, թէ մեծ յիմարութիւն կը լինէր իր կողմից մի այսպիսի ահագին կողոպուտը ձեռքից բաց թողնել, մանաւանդ, որ ինքը փողի շատ հարկաւորութիւն ունի։

Սիւրին պատասխանեց, թէ ինքը երբէք յանձն չէր առնի ձանձրացնել իր «իշխանին» անտեղի խնդիրքով և երբէք չէր ցանկանայ զրկել նրան իր շահերից, եթէ գիտենար, որ այդ երևակայական գանձը գոյութիւն ունի։ Բայց նա այդ բոլորը զրպարտութիւն է համարում, թէև հաղորդողներից մէկը իր հայրն է։

—Ուրեմն ինչ նպատակ ունէին նրանք խաբելու ինձ, հարցրեց խանը խորին վրդովմունքով։

—Նպատակ ունեն... պատասխանեց Սիւրին զգալի խռովութեամբ,— և նրանց նպատակը ինձ լաւ յայտնի է, բայց այժմ անյարմար եմ համարում հաղորդել ձեզ, յուսալով, որ իմ իշխանը կը հաւատայ, որ իր աղախինը սուտ խօսող չէ։

Այս խօսքերը արտասանեց նա այնպիսի մի զգացմունքով, որ ազդեց խանի քարացած սրտի վրա, և նա բռնելով իր առջև չոքած գեղեցիկ կնոջ թևքից, կրկին նստեցրեց իր մօտ ասելով.

—Ես կը կատարեմ քո խնդիրքը։

Սիւրին ուրախութեամբ ընկաւ իր «իշխանի» գիրկը, թևքերը փաթաթեց նրա պարանոցով և իր բորբոքված, շառագունած թշերը սեղմեց նրա շրթունքի վրա։ Այդ առաջին անգամն էր, որ մանկահասակ կինը այնպէս ջերմ, այնպէս անկեղծ սիրով գրկում էր իր բռնապետին, որին մինչև այն օր միշտ ատել, միշտ անիծել էր իր սրտում։

Այդ միջոցին կրկին հնչեց փողը և հեռուից լսելի եղան ձիաների սմբակների ձայներ։

—Այժմ հեռացիր, նազելիս, ասաց խանը կանգնելով և Սիւրին իր հետ վեր բարձրացնելով.—Թորոս իշխանը գալիս է։

Սիւրին ծածկվեցաւ իր մոյդ-կապտագոյն չարշաբի մէջ, ձգեց երեսի վրա անթափանցիկ քողը և դուրս եկաւ գաղտնարանից։ Մուտքի առջև նրան սպասում էր ծերունի ներքինապետը, որը առաջ ընկաւ և տարաւ տիկնոջը մինչև իր վրանը։ Այնտեղ միայն հարցրեց ծերունին.

—Ցաջողվեցաւ։

Սիւրին, ուրախութեան ժպիտը երեսին, պատասխանեց.

—Այո։

—Փառք Աստուծոյ, բացականչեց ծերունին իր գոհունակ ձեռքերը բարձրացնելով դէպի երկինքը։

(Կը շարունակվի)

Յունվարի 8-ին ԱԽԱԼՑԽԱՑՈՒՄ քաղաքագլխի ընտրութիւն եղաւ։ Ընտրվեցաւ Յ. Դեղամեանց ձայների բազմութեամբ, բայց հրաժարվեցաւ։ Նորից քուէարկեցին և ընտրվեցաւ պ. Յովհաննէս Մութաֆիեանց։ Մանրամասները այդ ընտրութիւնների մասին կը տպենք հետևեալ համարում, մեր սեփական թղթակցից նամակը ստանալով այդ հետաքրքիր ընտրութիւնների մասին։

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են հետևեալը։ «Մեր քաղաքում լապտերները շատ վատ են լուսաւորում և այնքան հեռու են միմեանցից, որ մէկը միւսից չէ երևում։ Փողոցները կեղտոտ են, անցնելու հնար չը կայ ցեխից, բայց մեր ոստիկանութեան գործունեայ անդամներից ոմանք, փոխանակ հոգ տանելու այդ ամենի մասին, պարապում են զանազան պ օ դ ր ա դ ն ե ր վերցնելով և օգուտ քաղելով։»

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են։ «Նորերումս մի պարոն, 46 տարեկան, նշանվել է մի 14 տարեկան աղջկայ հետ։ Ասում են, որ փեսացուն այնքան մարդասէր է, որ վճռել է դեռ մի քանի տարի սպասել մինչև աղջիկը հասակ առնի։ Բայց թէ ինքն կը ծերանայ,—այդ բանի վրա չէ էլ մտածում։ Գուցէ, մինչև որ աղջիկը հասակ կառնի, նա հաւատացած է, որ ինքն առաւել երիտասարդ կը դառնայ»։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ մեզ գրում են։ «Քաղաքիս արևմտեան կողմում, Գարեգեոի մօտ, յանուն հայ-կաթոլիկ ուսումնարանի կառավարութիւնը ընծայեց մի ահագին տարածութեամբ գետին, ուր կարելի է ծառաստան և բանջարանոց զարգացնել և առ նուազն յառաջիկայ տարում մօտ 200 բուրլ մուտք ստանալ։ Այժմ լսում ենք, որ հայր Արարատեանը, առանձին ժողովրդական ստորագրութեամբ կամենում է իրացնել այդ գեղինը։ Արդեօք ստոյգ է մեր այս լսածը»։

—

Մի հայ կաթոլիկ պարոն գրում է մեզ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ հետևեալը։ «Մեր լուսաւորչական եղբայրները կարծում են, թէ միայն նրանց մէջ է, որ օրից օր աւելանում է ազէտ և անբարոյական քահանաների թիւը, այն ինչ նոյն երևոյթը նշմարվում է և մեր հայ-կաթոլիկների մէջ։ Մօտ օրերումս պէտք է մէկը ձեռնադրվի, որ և կաւելացնի մեր ազէտ և մոլեռանդ քահանաների թիւը։ Սրանք են, որոնք զլխաւորապէս սերմանում են ատելութիւն մեր և լուսաւորչական հայերի մէջ. կարծես թէ չէ կարելի այլ և այլ կրօնքների պատկանել առանց միմեանց ատելու»։

—

ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻՑ մեզ գրում են։ «Նոր-Բայազետում յետազիմութիւնը, չնորհիւ իր մի քանի խաւարասէր առաջնորդների, սկսում է խոր արմատներ գցել։ Ուսման կարևորութիւնը հալածվում է և նրա զաղափարը ենթարկվում է փողոցային յիշոցների։ Քաղաքային դեպուտատ պ. Սիմոն Աղայեանց բացարձակ անիծում է ուսումը, լուսաւորութիւնը և դպրոցները։ Ցաւալի է, որ վերջին ժամանակներում նոյն մարդը նորից ընտրվեցաւ դեպուտատ։ Ասում են որ նրա ընտրութիւնը շատ անկանոն է եղել»։

—

Պ. Աբել Ապրէսեանց, որ յանձն է առել հրատարակել Բաֆֆիի «Խենթ» վէպը առանձին գրքով, խնդրում է մեզ յայտնել, որ նրանք, որոնք ցանկութիւն ունեն գրվել «Խենթին» բարեհաճեն չտապել իրանց վճարը ուղարկել պ. Ապրէսեանցին, նոյնպէս և նրանք, որոնք բարեհաճել են իրանց բարեկամների շրջանում բաժանորդներ հաւաքել, շուտով հասցնեն հաւաքած վճարը։

—

Պ. Տիգրան Նաւասարդեանց խնդրում է մեզ յայտնել հետևեալը։ «Արդէն բաւական ուշեմ ժողոված և դարձեալ ժողովում եմ՝ ժողովրդական առաջներ (հեքիաթներ), առածներ, անէծքներ, օրհնանքներ, հանելուկներ, նաև բուն ժողովրդական բառեր և ոճեր թէ երկրագործական գործիքների, թէ տնային կահկարասիների, բոյսերի, կենդանիների և այլ անուններ։ Ինձ նիւթ ուղարկողը իմ գրքի տպագրութենից յետոյ մի օրինակ ձրի կը ստանայ։ Ինձ կարող են դիմել հետևեալ հասցէով։ «Тифлисъ, въ Частную Лечебницу, Доктору Баграту Навасартянцъ».

—

Եղանակը ԹԻՖԼԻՍՈՒՄ շատ օտարոտի և անբնական է։ Ջիւնի տեղ անձրևներ են գալիս երկար չորութենից յետոյ, և լինում են այնպիսի սաստիկ քամիներ, որոնք սովորաբար միայն մարտ ամսին են լինում մեզ մօտ։

—

Քանի մի օր է դարձ ալ Ռուսաստանի փոստը չէ ստացվել Կովկասեան սարերի վրա ընկած մեծ ձիւնների և յաճախ պատահող փոթորիկների պատճառով։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ԳՕԼՕՍ» ԼՐԱԳԻՐԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

—

„Голосъ“ լրագրի ներկայ տարվայ առաջին համարի մէջ կարդում ենք հետևեալ առաջնորդող յօդուածը հայերի մասին։

Քանի որ Բերլինի դաշնագիրը ստորագրող մեծ պետութիւնները երբեմնապէս բանակռիւ են սկսում Բ. Պրան հետ Հայաստանի մէջ մտցնելի վերանորոգութիւնների մասին, հայկական հարցի ծագելու պատճառով զայրացած թիւրքաց վարչութիւնը սիստեմատիկաբար ոչնչացնում է Փոքր-Ասիայի հայ ազգաբնակութիւնը։ Ուշադրութիւն ենք դարձնում ներքևը տպված Մուշից ստացած թղթակցութեան վրա։ Դա ստացված է կատարելապէս արժանահաւատ մի անձնաւորութիւնից, որ պատահաբար վկայ է եղել այդ անցքերի, որոնց նմանները ամեն օր կատարվում են Հայաստանի շատ տեղերում։ Սիրթէ Լրոպան իր ստորագրութեամբ հաստատեց Բերլինի դաշնագրի 61-դ յօդուածը նրա համար, որ աւելի էլ անտանելի դարձնի Ասիայի քրիստոնեայ ազգաբնակութեան կեանքը։

Բերլինի դաշնագրի միւս բազմաթիւ յօդուածների հետ Բ. Դուռը մոռացաւ նոյնպէս և 61-դ յօդուածը։ Նա երկար չէ և մենք կը յիշեցնենք նրան.

„Բ. Դուռը պարտաւորվում է անյապաղ իրագործել բարենորոգութիւններ և վերանորոգութիւններ հայերով բնակեցրած նահանգների մէջ տեղական պահանջների համեմատ և պաշտպանել նրանց ապահովութիւնը չերքէզներից և քիւրդերից։ Բ. Դուռը անընդհատ կը հաղորդէ պետութիւններին տեղեկութիւններ այդ նպատակին հասնելու համար գործադրած միջոցների մասին, որոնք (պետութիւնները) կը հսկեն նրանց գործադրութեան վրա“։

Այս յօդուածի առաջին և գլխաւոր բաժինը բառացի կրկնութիւն է Սան-Ստեֆանոյի մէջ կապված սկզբնական խաղաղական դաշնագրի 16-դ յօդուածի։ Անկասկածելի է, որ հայկական խնդիրը բարձրացրած է Սան-Ստեֆանոյի դաշնագրով և ներշնչված է Բաղաւոր Կայսրի քրիստոնէական ողորմասրտութեամբ։ Բացի այդ այն երկիրը, որտեղ կատարվում են թիւրքաց վայրենութիւնները, մեր երկրին սահմանակից է։ Թիւրքաց ճնշումից տանջվող հայ ազգաբնակութիւնը մեզ միշտ հաւատարիմ է եղել ամեն տեսակ պատերազմների ժամանակ և դրանով պատճառ է դարձել Թիւրքաց տանջութեանը։

Հետևաբար Ռուսաստանը բարոյապէս պարտաւոր է հայկական խնդրի լուծման սկզբնապատճառ դառնալ և պնդել, որ խոստացած վերանորոգութիւնները անյապաղ մտցնվեն Հայաստանի մէջ։ Այդ գործի մէջ Ռուսաստանը կարող է յուսալ, որ բոլոր պետութիւնները կը պաշտպանեն նրա պահանջները, որովհետև 61-դ յօդուածի երկրորդ մասը ոչ թէ միայն Ռուսաստանին է պատկանում, այլ և Բերլինի դաշնագիրը ստորագրող բոլոր պետութիւններին, որոնք, պարտաւորված լինելով հսկել Թիւրքաց Հայաստանի մէջ մտցնելի բարենորոգութիւնների և վերանորոգութիւնների գործադրելու վրա, չեն կարող անտարբերութեամբ նայել այն գազանութիւնների վրա, որոնց մեզ հաղորդում են Մուշից։

„Մշակի“ հետևեալ համարներից մէկի մէջ կը տպենք „Голосъ“-ի այն թղթակցութիւնը Մուշից, որի առիթով լրագիրը տպել է այս առաջնորդող յօդուածը։

—

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Մուշ, 2 դեկտ. 80

Հայկական կեանքն այսօր խիստ ծանր և վերահաս վտանգներով շրջապատեալ է Հայաստանի մէջ. ամեն տեսակ մեքենայութիւնք կը լինեն հայութիւնը ջնջելու այս երկիրներէն, զի երբ կառավարութիւնն ինքն փոխանակ հայոց ցաւերուն դարման և վիրաց վրա սպեղանիներ դնելու, չի խղճեր նոր վէրքեր և խոցեր բանալու իրենց դիակապոյտ մարմնոյն վրա, այն տանն ծայրագոյն թշուառութեան և յուսահատութեան մէջ գիւրին է ամեն մարդու երևակայել թէ ինչքան դառն կը լինի իրենց վիճակն և անտանելի կեանքը։

Վատաբարկանն ամայացնելու ամեն ճիգն կը թափուի սովն սաստկացնելով, չէյխին մոլեռանդութիւնն և բարբարոսաց կատաղութիւնը գրգռելով, զինուորական արշաւանքներն բազմապատկելով։ Բաղէշը կը ջլատեն և կը լքանեն՝ վրանաբնակաց բազմաւորութեան մէջ հեղձանելով հայուն կայքն ու կարողութիւնը, կեանքն ու ապրուստը, խլելով հայ մանկան հացն և տալով քրդին, զրկելով Վանայ տառապեալն՝ Աղերսի դատարկապորտերն պարարտացնելու համար։ Նոյնն ի Տիգրանակերտ, ի Քարբերդ, յՆերզնկա և ի Կարին։ Իսկ Տարօնը իրրև հաւասարակշիռ նըժարներու մի սլաք չը կընալով ոչ մի կողմ հակեցնել, տեղի վրա ոչնչացնելու վճռոյն դատապարտուած կը տեսնուի։ Իպօն կը զարնէ, կը սպաննէ, կը թալնէ, Մէհմէտ Ալին կայրէ, կը կողոպտէ, կաւերէ, Միրզա պէկն և Սալէյի Աղան կը մահացնեն հայուն կեանքն ու պատիւը, կը պղծեն կրօնական և բարոյականն, բոզքներ, խնդրագրեր, ազերներ կը թափին կառավարութեան առաջ, նա փոխանակ գործօն և բուռն միջոցներու ձեռնարկելու, միջնորդներով բանակցութեանց կը մտնէ այդ գազան հրէշներու հետ, պատուիրակներ և թղթեր կը զրկէ ու կընդունի, պայմաններ կռելու կելնէ, մէկն իւր կնարին տեսուչ կը կարգէ, միւսն տասանորդաց գողութեանց բացարձակ քննիչ կանուանէ, երրորդին միւտիրութիւն կուտայ, իսկ չորրորդին իբրև ամենապատուաւոր մի մարդու տոմսակաւ կը խնդրէ որ գայ բանդը մտնի. առանց բնաւ իսկ մտաբերելու թէ այդ ժամանակներու իւրաքանչիւր ժամն կանցնի մահ կամաւոր բերելով գիւղացի հայուն գլխին։

Բայց երբ ամսոյս 25-ին կիւրակէ երեկոն զինուորական հազարապետ մը զինով և զինուորներ չրջապատեալ կուգայ Մշոյ դաշտի Ալվարինճ հայ գիւղը, օթեանի փցուն պատրուակաւ վէճ կը բանայ խումբ մի դարձեալ գենեռիթիթ գեղացւոց հետ. վէճը կռիւ, կռիւը ծեծի կը փոխուի, երկուստեք հաւասարապէս զիրար վիրաւորելով։ Երբ կըսեմ գիշերուան ժամ 10-ին կառավարիչն իւր տան մէջ քանիմը զինուորական սպայից հետ Բաքոսին պաշտօն մատուցանելիս կիմանայ եղելութիւնը, իսկոյն դատական ժողովովն, գումարտակ մի կանոնաւոր հեծելազօրք, ոստիկաններով, զօրապետներով, իսկոյն կը հասնի գիւղը, կը սփռէ զօրքն գիւղին մէջ, գիւղացիք զահի հարեալ ցիր և ցան կը փախչին, այնպէս որ միայն գիւղապետն, քահանայքն և քանի մը ութսունամեայ ծերունիներ գեղին մէջ մնացած միակ այր չափահասներ կը ձերբակալին և ի ծեծ մատնելով հարցաքննութեան կենթարկուին։ Զօրքը տներէն ներս խուժելով մայրն ու մանուկն, քոյրն և երեխայն, ծննդականն ու հիւանդը, պառաւն ու ծերը անխնայ կը տանջեն, մառանները կաւարին, կենդանիները կը մորթեն, ցորեն ու գարին ձիերուն առաջ և հողերուն մէջ կը թափեն, հայհոյանք, շուտանք կը տեղան կրօնի, ազգութեան և պատուոյ դէմ. կառավարիչն ևս բաղում սպառնալեաց հետ բիւր անարգանս կը ժայթքէ հայ զեկավարաց գլխին, գիւղն այրելու, ջարդելու հրամաններ և գոռումներ ամեն բերնէ կորոտան, նոր փախուստներ արուի և իգի, հրացանները ձայնել կը սկսին, վիժումնք, ուշաթափութիւնք, լեզապատառութիւնք ամեն ինչ տեղի կունենան. վիրաւորաց և զարհուրելոց լացն ու ճիչը, վայնասունն և աղաղակը օդն ու լեռները կը թնդացնէ. մօտ տեղեր ապաստանեալ փախստականք չը կընալով դիմանալ իրենց ընտանեաց այս աղեկոտուր տեսարանին, քիչ քիչ դալ կը սկսին անհնարին տանջանաց ենթակայ, զորս կառավարիչն մի տեղ դոմել տալէն վերջ կը չարունակեն ինքն և իւրայինքն առաւել սաստկութեամբ։ Ալվարինճը վիճակեալ էր զըղանչըգի ամեն տարաբաղդութեանց, եթէ քաղաքիս ոստիկանապետն իւր ամեն ոյժն ի գործ չը դընէր մեղմացնելու համար այդ կատղած գազանները։

Այն ծայրայեղ միջոցներով կատարուած քննութեամբն իսկ ութ մարդ միայն ամբաստանեալ կը նկատուին, որոց չորսն կը ձերբակալեն առաւօտեան լուսով հանդերձ ուրիշ քառասունի մօտ անձերով. և այն ահա ինչպէս, իրենց եղած տեղերէն երեսի վրա ոտներնէն ընդքարշ ածելով գաւազանի և հրացանի կոթի հարուածներու տակ կը բերեն մինչի գիւղ, դատական պաշտօնեայք և ընդհանուր դատախազն, որ հայ մի է, իրենց չորս ներկայ ամբաստանեալք կը զատեն, և մնացածներն արձակել կը պահանջեն։ Կառավարիչն որ աւարներէն իրեն մասն ընկած կարաս մը գինի առջևը դրած իւրայնոց հետ կը խմեր և կը փսխեր, կը հրամայէ զամենքն ևս կապելով քաղաքը բերել. ի զուր կը բողոքեն դատարանք, և երբ խումբ մը կանայք մանկունս ի գիրկս կուգան յայտնելու թէ ասենք յանցաւոր չեն և կը խնդրեն արձակել, կը հրամայէ սուինահարել. իսկոյն կը կատարուի իւր հրամանն և քսան երկու մարդ ձեռքերն ու թեւերը կապուած հարուածներու և կոկտանաց ենթակայ բերուեցան քաղաքը։ Գիւղէն մեկնելս մի հօթնամեայ պառաւ ինքզինքն կը ձգէ կառավարչի ձիու ոտներուն վրա իւր անմեղ միամօրին արձակումը խնդրելու, բայց մտրակի հարուածները ընդունելով նոյն իսկ կառավարչէն և ձիուն ոտից կոխան լինելով այսօր ինքն ևս մահուան դուռն է։

Բարեբաղդ կը համարէր ինքն զինքն Տարօնը, եթէ այս զոհերու բաւականանային իրենց արիւնով սրբելու պիղծերու ժանտ հոգւոյ ժանգը. իսկ աւելի բարեբաղդ եղաւ տեսնելով զիւր որդիս ազատ չնորհիւ Վանայ ռուսական հիւպատոս Կամսարական պէյի մարդասիրական և ազգասիրական ջանից։ Երկու երեք օրէ ի վեր տեղս կը զտնուէր արդէն վսեմ. հիւպատոսն, որ եղելութիւն իմանալուն պէս զրկեց իւր թարգմանը Ալվարինճ և օրինաւոր քննութիւն մը ընել տուաւ, և այնուհետև ամենասուր և ազդու միջամտութեամբ պահանջեց արձակել ոչ—ամբաստանեալներն. և մնացածներն ևս ազատել տարապարտուց և ցած աշխատութիւններէն, զորս կրել կուտային իրենց զօրանոցի արտաքնոցի աղբանոցները մաքրել տալով. երեսնին ապականելով և նշաւակ աշխարհի կացուցանելով. առժամայն կատարվեցան իւր պահանջմունք. 18 հոգի լիայոյս և լիասիրտ դարձան իրենց գեղը, 4 հոգին էլ զօրանոցէն բանդը փոխադրուեցան։ Կը յուսամք թէ Կամսարական պէյի փրկարար ներկայութիւնը առանց դատաստանին վրա ալ արդար ազդեցութիւն մը անելով շատ կազատուին։

Ալվարինճը Մշոյ դաշտի այն գիւղերէն մէկն է, որ պատերազմի ժամանակն իսկ չիւղ մի կոզոպուտ տուած չէ չնորհիւ իւր բնակչաց քաջութեանն, զոր մեռցնելու միակ նպատակաւն անչուշտ ծնունդ տուին այս քստմնելի պատահարին։ Այլ մեր հաւատքն այն է թէ այս պատճառաւ տեղի ունեցած պաշտպանութիւնքն քաջալերումն ու սրտապնդումն բոլորովին տարբեր և կառավարութեան ակնկալութեան հակառակ արդիւնքներ կարտադրեն ոչ միայն Ալվարինճի, այլ բոլոր դաշտի հայոց մէջ, որք ամենայայտնի կերպով տեսան թէ ինչ է եղեր իրենց նեցուկ և ապաւէն համարած կառավարութեան պաշտպանութիւնն, և թէ այսուհետև ուրիշ կերպ պաշտպանութեան և օգնութեանց միջոցներ ձեռք առնելու հեռամուտ պիտի լինին.....։

Գիսակ

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ